Հանձնաժողովի՝ քվեատուփը և հատուկ ծրարները հսկող անդամի գործառույթները

- Մշտապես պետք է գտնվեք ընտրական քվեատուփի մոտ:
- Պետք է վերահսկեք ընտրական քվեատուփը և հատուկ ծրարները:
- Պետք է փակ պահեք ընտրական քվեատուփի մեջ հատուկ ծրարը գցելու ճեղքը:
- Ընտրողին, քվեախցիկից դուրս գալուց հետո, պետք է ցուցում տաք, որ առանձին դրված սեղանից ինքնուրույն վերցնի մեկ հատուկ ծրար և նրա մեջ զետեղի ծալված ընտրական քվեաթերթիկը:
- Նրանից հետո, երբ վստահ կլինեք, որ ընտրողի ձեռքին միայն մեկ հատուկ ծրար կա, պետք է բացեք քվեատուփի ճեղքը և ընտրողին ցուցում տաք, որ հատուկ ծրարը գցի ընտրական քվեատուփի մեջ:
- Հատուկ ծրարը ընտրական քվեատուփի մեջ գցելուց հետո խնդրե՛ք ընտրողին ազատել ընտրական տեղամասը:

Նկատի՛ ունեցեք.

- ✓ Միայն ընտրողն ունի ընտրական քվեաթերթիկը հատուկ ծրարի մեջ զետեղելու իրավունք: Բացառություն է «ֆիզիկական վիճակ» ունեցող ընտրողը, որի փոխարեն նրա ներկայությամբ ընտրական քվեաթերթիկը հատուկ ծրարի մեջ է զետեղում և ծրարը ընտրական քվեատուփի մեջ գցում նրա կողմից ընտրված անձը, որն օգնում է նրան քվեախցիկում ընտրական քվեաթերթիկը լրացնել:

- ✓ Թույլ չի տրվում ընտրական քվեատուփին մեկից ավելի ընտրողի մոտենալը:

- ✓ Ընտրական հանձնաժողովի անդամն իրավունք չունի բացել լրացված ընտրական քվեաթերթիկը:

- ✓ Մինչև ընտրողի կողմից քվեաթերթիկը/քվեաթերթիկները հատուկ ծրարի մեջ զետեղելը՝ իրավունք ունեք նրանից պահանջել՝ Ձեզ ցույց տալ, որ ձեռքում սահմանված քանակությամբ ընտրական քվեաթերթիկ (այնպես, որ չխախտվի քվեարկության գաղտնիությունը) և մեկ հատուկ ծրար կա: Ընտրողը պարտավոր է կատարել այդ պահանջը: